ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ
№ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРАРАТИ МАРЗ
ГОРОД АРАРАТ
ОСНОВНАЯ ШКОЛА N2
ИМ.ПАРУЙРАСЕВАКА
ГНТО

Արարատ, Շահումյան 16
հ. (0234), 4-12-09
ararat2@schools.am

г. Арарат,ул. Шаумян 16
Тел. (0234) 4-12-09

08.10.2021թ.

Թիվ 08

**ՀՀ Արարատի մարզպետ**

**պարոն Ռազմիկ Թևոնյան.**

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացած ֆիզիկայի ուսուցչի պաշտոնի թափուր տեղի համար, ըստ սահմանված կարգի, հայտարարվել է մրցույթ, որը կկայանա 2021թ.-ի հոկտեմբերի 21-ին, ժամը 14$^{00}$-ին «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Դպրոցի տնօրեն՝ Նաիրա Մխիթարյան

Առդիր 2 էջ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա առարկայի ուսուցչի /12 ժամ/ թափուր տեղի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4)<Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/,

5) ինքնակենսագրություն (Ձև 3),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու

իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր

(առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

**Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացվող փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:**

**Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին ժամը 14$^{00}$–ին, Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոցում, հասցեն ք. Արարատ, Շահումյան 16:

Տեղեկությունների համար զանգահարել (0234) 4-12-09, (096)990060 հեռախոսահամարներով: